ԵԹԻՄ ՏՂԱՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի եթիմ տղա յա ըլըմ։ Դա գնըմ ա, թե մի գորձ գդնի, մի գեղըմ մութը վրա յա հասնըմ։ Շատ ըմանչկոտ ա ըլըմ, ըմանչըմ ա, թե մի տեղ ղոնախ ըլի, էնա գնըմ ա մի գրեզմանոցըմ, գրեզմանի քարի տըկին կուչ գալի։ Մին էլ տենըմ ա, որ մի մարթ մի մեշոկով բերուց մի բան վեր դրուց, ֆողը փորեց ու էդ բանը թաղեց, եդ-եդ գնաց։ Նա որ գնըմ ա, են թաղած բանը ծվըմ ա, ճչըմ ա թե. «Ինձ քոմակ արեք, ձեզ մատաղ, ես սաղ եմ, ինձ ազատեցեք»։
Էդ տղեն գնըմ ա ֆողը եդ ա ածըմ, հանըմ ա, տենըմ, որ մի սիրուն ախչիկ ա, կոխկըմը խնչալով տված ա, հմա ինքը մեռել չի։
Դու մի ասիլ էդ ախչըկա հերը տանր չի էլած ըլըմ, ուրիշ տեղ ա գնացած ըլըմ, դրանց նոքարն էլ աչկն ա դրած ըլըմ ախչըկա հոր ապրուսի վրա, էդ ախչկանն սպանըմ ա, որ ինքը չկել հոր գալը ապրուստը գողանում ա։ Եդնա գողանըմ ա, որ հերը գալիս ա, ասըմ.— Ղաչաղնին էկան, ախչկանդ փախցրին, տունն էլ թլանեցին տարան։
Էն եթիմ տղեն էն ախչկանը հանըմ ա, իրան էլ մի պատառոտված շաբիք ա ունենըմ, նրա յարենին փթաթորըմ ա։ Եդնա էդ ախչիկն էդ տղին ասըմ ա.— Ես քի քիր, դուն էլ ինձ ախպեր, ուր գնըմ ես ինձ էլ տար։
Էնա դրանք վեր են կենըմ, գնըմ են մի ծմակի միջի տափ են շինըմ, կենըմ։
Մի երկու օր կնանչով-բանով ապրըմ են, եդնա էդ ախչիկն ասըմ ա.— Սհե ապրիլ չի ըլիլ։
Դա իրա մազերի միչին անգին քար ա ունենըմ թաքուն, հանըմ ա, էդ տղին ա տալի, ասըմ ա.— Գնա մեզ հմար ուտելու բան ու ման էլ առ, էրկու ձեռք տղամարթի շոր էլ առ, իրար նման բի, էրկու հատ էլ ձի առ, իրա թամբովն ու սարքովը վի կալ բի։
Տղեն թաքուն տենում ա, որ ըտոնք մազերիցը հանեց, եդ մազերը կլոլեց գլխին կոս արավ։ Եդնա դա գնըմ ա առնըմ, ինչ որ ասած ա ըլըմ, բերըմ ա։ Դրանք էրկուսն էլ հաքնվըմ են, ուտըմ են, կշտանըմ, ձիանուն վեր են ըլըմ, գնըմ են մի ըշխարի վրա։ Շատ են գնըմ, քիչ են գնըմ, իրանք գիտեն, գնըմ են մի թալա հասնըմ։ Բեզարած են ըլըմ, վեր են գալի դինջանալու։ Հաց ու մաց են ուտըմ, դինջանըմ են, եդնա էդ ախչիկը շատ ա բեզարած ըլըմ, գլուխը դնըմ ա էդ տղի ծնկան վրա ու քնըմ։ Տղեն մազերը քանդըմ ա, ասըմ ա՝ հլա տենամ ինչ կա սրա մազերըմը։ Քանդըմ ա, տենըմ անգին քարերը հլե-նհե վլվլում են։ Ձեռին նհե բռնած թմաշ անելիս ա ըլըմ, էն կռնից մի ղուզղուն գալիս ա կտըմ ու թռչըմ։ Դա մընըմ ա սլարած։
Ասըմ ա.— Հըմի ի՞նչ անեմ, ի՞նչ չի անեմ, ես ամոթիցը գետին կմտնիմ, որ զարթնի։
Շատ ա մտկի ընգնըմ, վերջն ասըմ ա.— Էլ ես սրա ըրեսին կենալ չեմ։
Ախչկա գլուխը դնըմ ա մի քարի վրա, ձիանն էլ, ամեն ինչ էլ թողըմ ա, հաքի շորերն էլ հանըմ ա, թողում ու գնըմ, ասըմ ա. «Որ վե կենա, ես ի՞նչ ջուղաբ տամ, կասե դուն ես գողացել»։
Ախչիկը վե ա կենըմ, տենըմ ա՝ տղեն ըտի չի, էնա ձեռքը գլխին ա տանըմ, տենըմ ա անգին քարերն էլ չեն ըտի, ասըմ ա,— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ընդուր են ասել, թե հում կաթնակերին էհտիբար չկա, վե յա կալել ու գնացել։
Հմա եդ որ տենըմ ա համ ձիանն են ընտի, համ էլ շորերն ա հանել թողել, մընըմ ա հուշ էլած։ Էդ ձիանուն նստըմ ա, մինն էլ քաշելով, գնըմ ա հասնըմ մի քաղաքի ղրաղ, ըտի ձիանը ծախըմ ա, գնըմ ա մի դուքան ա մտնըմ, ասըմ ա.— Ինձ մի գորձ տվեք ես էլ աշխատեմ։
Ասըմ են.— Անըմըդ ի՞նչ ա։
Ասըմ ա.— Հալվաչի Գոզալ։
Ասըմ են.— Կարա՞ս հալվա շինես։
Ասըմ ա.— Հա։

Էնա դրան ըտտե ասըմ են. «Դե հալվա շինե»։ Դա հալվա յա շինըմ, ծախըմ։
Էն եթիմ տղեն էլ վե յա կենըմ, գնըմ ա մի հարուստ մարթի տանը նոքար ա ըլըմ։ Տհե մի քանի վախտ կենըմ ա, եդնա էդ տղեն դրան շատ բանացնելիս ա ըլըմ, հախ տալիս չի ըլըմ։
Օրենը մի կտոր չոր հաց ա տալի, ասըմ ա.— Բանի։
Դա որ տենըմ ա իրան տհե գեշ են մտիկ անըմ հա, ասըմ ա.— Թքեմ սրանց տված հախի վրա, լավն էն ա գնամ ուրիշ տեղ ըշխատեմ, բալի տուն ու տեղ դառնամ։
Ուզրմ ա գնա, աղի կնիկն ասըմ ա.— Ո՞ւր ես գնըմ։
Ասըմ ա.— Էլ կենըմ չեմ։
Ասըմ ա.— Դե գնա մեր բաղըմը մի չոր ծառ կա, կտրե, ջարդե, հաց տեմ թխիլ. ըսօրվա քո կերածի հախն էլ ա հանե, եդնա ուր ուզում ես ջհանդամվի (Վայ տամ նրա գլուխը, մթամ նաչարին հաց ա տված ըլըմ, էն էլ ըրեսովն ա տալի)։
Էդ նաչարը բան չի ասըմ, անսաս գընըմ ա կտրըմ։ Կտրելիս տենըմ ա էն ղուզղունը բլլիցը թռավ։
Գնըմ ա տենըմ, որ էն բլլըմը մի բուն կա շինած, էն անգին քարերն էլ միջին դրած ա։ Անգին քարը վեր ա ունըմ, վեր գալի էդ ծառը կտրըմ ա, փետը ջարթըմ, գալիս ա ասըմ.— Խազեին, փետը հազիր ա։
Խազեինի կնիկը բերըմ ա հաց ա տալի, ասըմ ա.— Ճամփըմը կուտես։
Դա վրա ա անըմ էդ հացը ու ասըմ ա.— Շնորհակալ եմ ձեր լավութենիցը, ես ինձ համար ուտելու հաց կգտնեմ։
Գնըմ ա տենըմ էրկու մարթ են գնըմ։
Ասըմ ա.— Ո՞ւր եք գնըմ։
Ասըմ են.— Սհե-սհե գնըմ ենք մեր կորուստը գտնելու։
Դրանցից մինը էն ախչկա հերն ա ըլում, մինն էլ էն նոքարը, որ թաղել էր։
Նաչարի հերը հենց գիտենըմ ա, թե ըղորթ որ դաչաղնին են տարել, նոքարն էլ հետը հնգերացել ա, որ իրա վրա կարծիք չի անի, գնըմ են ման գալու։
Դա ասըմ ա.— Դե էրկուսը չի ըլեք, յիրեքն ըլինք, գնանք, ես էլ եմ գալի։
Վի են կենըմ իրար հետ գնըմ են։ Գնըմ են հասնըմ էն քաղաքը, որդի որ Հալվաչի Գոզալն ա։ Գնըմ են թուշ Գոզալի դուքանի դռանը վեր գալի, ըստի սոված են ըլում, Գոզալիցը հալվա են առնըմ, ուտըմ, եդնա էդ Գոզալը դհանց ճնանչըմ ա։
Ասըմ ա.— Ո՞ւր եք գնըմ։
Ասըմ են.— Սհե-սհե, գնըմ ենք մեր կորուստի եդնա։
Ասըմ ա.— Էս ա մթնել ա, էկեք իմ տանը ղոնախ էլեք, ըռավոտը կլիսանա, կգնաք ուր ուզըմ էք։
Դրանց տանըմ ա ղոնախ անըմ, ետնա զրից են անըմ, դեսից-դենից խոսըմ են, առակ են ասըմ, էդ Գոզալին ասըմ են մի նաղլ էլ դու արա, քուններուս տանըմ չի։
Եդնա էդ Գոզալը իրա գլխի էկածնին պատմութին ա անըմ, հըմա ասըմ չի, թե ինքն ա։
Որ պրծնըմ ա, հերը ճնանչըմ ա.— Բալա ջան, էդ դո՞ւն ես, էլ խի՞ ես ինձ չրչարում։
Վի յա կենըմ փթաթվըմ ա, պչպչոտվըմ են, էն քյոռ մահի տարած նոքարն, ընտի շան պես գլխի ա ըլըմ, վեր ա կենըմ, թե փախչի, եթիմ տղեն աղաքը կտրըմ ա, ասըմ ա յավաշ։
Եդնա էդ տղեն հանըմ ա, էն անգին քարերը ախչըկա ըղաքին վեր ա ածըմ։
Ասըմ ա.— Բա դուն ինձ լավութին արիր, ինձ էն ըշխարից հանեցիր, վերջը խի՞ տհե նամարդութին արիր, ինձ թողիր էն չոլի կիսըմը, վի կալար դրանք գնացիր։
Նոր էդ տղեն հանգամանքնին ասըմ ա, ասըմ ա սհե-սհե։ Էն ա գալիս ու էդ տղին էլ ա բարովում։

Եդնա հերը էդ նոքարին ասըմ ա.— Տո դուռումսաղ, քի ախչիկ եմ պահ տվե՞լ, թե դու տհե բաներ անես։
Դրա լիզուն բռնըվըմ ա։
Ախչիկն աղաք ա գալի, ասըմ ա.— Բախշե, հայրի՛կ, դա առանց էն էլ իրա ըռխեվերութենով լավ օր չի տենալ։
Էն եթիմ տղեն էլ ա տհենց ասըմ, հերը բախշըմ ա։
Եդնա էդ տղին ասըմ ա.— Դու որ իմ բալին ազատել ես, ինձ մենձ լավութին ես արել, հմի ասա, ինչո՞վ կարամ քու լավութենի տկիցը դուս գամ։
Ասըմ ա.— Ես մի բան էլ ա ուզըմ չեմ։
Էն նոքարին որ բախշըմ են, աղաք ա գալի ասըմ ա.— Դրանք իրար դսմաթ են, արժան են իրար։
Էն եթիմ տղեն ասըմ ա.— Դե որ տհենց ա, դու էլ մեր քավորը կլիս։ Նոր ըտի դրանք ուրխանըմ են։ Էն նոքարի հետ էլ հերը բարըշըմ ա, ասըմ.— Որ իմ բալեն ու փեսեն քի բախշըմ են, ես էլ եմ բախշըմ։
Բերըմ են դրանց հրսանիք անըմ, օխտն օր, օխտը քշեր ածըմ են, նրանք հասնըմ են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։